Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
ապրիլի 1 -ի N 331 - Ն որոշման

«Հավելված N 4
կառուցապատման նախագծի մշակման,
փորձաքննության, համաձայնեցման,
հաստատման և փոփոխման կարգի

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՍԽԵՄԱՅԻ ԿԱԶՄԻՆ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Նախագծային նյութերը բաղկացած են գրաֆիկական և տեքստային մասերից։

1. Գրաֆիկական մասում ներառվում են՝

1) տարածքի կադաստրային հանույթը.

2) տարածքի իրադրային հատակագիծը 1։10 000, 1։5000 մասշտաբներով.

3) տարածքի հենակետային հատակագիծը տարածքի տեղագրագեոդեզիական հանույթի հիմքի վրա 1։2000, 1։1000 մասշտաբներով.

4) տարածքի կառուցապատման գլխավոր հատակագիծը (հիմնական գծագիրը) 1։2000, 1։1000 մասշտաբներով.

5) տարածքի ինժեներական սպասարկման համակարգի սխեման 1։10 000, 1։5000 մասշտաբներով.

6) տարածքի կառուցապատման ծավալատարածական լուծումները և հորինվածքը ներկայացնող նյութերը, այդ թվում՝

ա. համայնապատկերներ, դրվագներ,

բ. փռվածքներ,

գ. կտրվածքներ,

դ. համակարգչային եռաչափ գծապատկերներ։

2. Տեքստային մասում ներառվում են՝

1) տարածքի կառուցապատման իրավունքը հաստատող փաստաթղթերը.

2) տարածքի կառուցապատման ճարտարապետահատակագծային առաջադրանքը.

3) ինժեներական սպասարկման տեխնիկական պայմանները.

4) համառոտ բացատրագիրը, որը ներառում է՝

ա. նախագծման հիմքը,

բ. կառուցապատվող տարածքի բնութագիրը (կլիման, ռելիեֆը, ինժեներաերկրաբանական պայմանները),

գ. առաջարկվող կառուցապատման ճարտարապետահատակագծային և ծավալատարածական լուծումների հիմնավորումները,

դ. տարածքի կառուցապատման սահմանափակումները և չափորոշիչները (տվյալ տարածքի համար սահմանված կարգով հաստատված գոտևորման նախագծի բացակայության դեպքում),

ե. տարածքի կառուցապատման հիմնական ցուցանիշները»։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ